<<ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ԿԳՄՍՆ <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական հաստատություն է: Սույն ուղեցույցի նպատակն է ուսանողներին ծանոթացնել <<Չարենցավանաի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ), պատմությանը, քոլեջում առկա մասնագիտություններին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, Քոլեջի ստորաբաժանումներին և նրանց գործունեությանը:

ՔՈԼԵՋԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային տարիներին ք. Չարենցավանը հանդիսանում էր հանրապետության արդյունաբերական հզոր քաղաքներից մեկը, որտեղ հիմնականում գտնվում էին ծանր արդյունաբերության և մեքենաշինության գործարանները: Չարենցավանում տեղակայված էին 12 արդյունաբերական խոշոր գործարաններ, ինչն էլ ի իր հերթին բերեց միջին օղակի որակյալ կադրերի պատրաստման անհրաժեշտության: 1964 թվականին կառավարության որոշմամբ Չարենցավանի հաստոցաշինական գործարանում բացվեց Չարենցավանի հաստոցագործիքային տեխնիկումը:
Հետխորհրդային ժամանակահատվածում, երբ կազմալուծվեց տնտեսությունը և այլևս չէին աշխատում արդյունաբերական ձեռնարկությունները, անհրաժեշտություն առաջացավ փոխել տեխնիկումի անվանումը և մասնագիտությունները: Այն վերանվանվեց սկզբում Չարենցավանի պոլիտեխնիկում, այնուհետ՝ Չարենցավանի պետական քոլեջ: Քոլեջը սկսեց իրականացնել ուսուցում միջին մասնագիտական և նախնական մասնագիտական կրթությամբ՝ իր առջև դնելով նպատակ պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող որակյալ ու մրցունակ մասնագետներ և արհեստավորներ:

Հիմնադրման օրվանից առ այսօր Չարենցավանի և շրջակա 15-ից ավելի համայնքների համար քոլեջը պատրաստել է 6000-ից ավելի մասնագետներ: Չարենցավանի պետական քոլեջը միակ ուսումնական հաստատությունն է Չարենցավան համայնքում, որտեղ կարող են ուսումը շարունակել Չարենցավան համայնքի հիմնական և ավագ դպրոցների շրջանավարտները:

Քոլեջը ունի տիպային ուսումնական համալիր՝ նախատեսված մոտ 450 ուսանողի համար:
Քոլեջում կրթությունը իրականացվում է ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ. Այն նպաստում է մարդու և քաղաքացու շահերին, պատրաստում մրցակցային կյանքին՝ բացահայտելով ուսանողի հնարավորությունները, ծառայելով անհատին ու ժողովրդին, իրականացնելով ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքը և զերծ մնալով խտրականությունից և սահմանափակումներից:
Քոլեջն ունի բազմամյա փորձ ունեցող մանկավարժական աշխատողներ և անընդհատ համալրվում է երիտասարդ, բանիմաց մասնագետներով: Նրանց համատեղ աշխատանքի, իրականացվող վերապատրաստումների շնորհիվ քոլեջում իրականացվում է արդիական և որակյալ ուսումնական գործընթաց: Քոլեջում ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացվում է նաև մեթոդական, դաստիարակչական գործունեություն:

Քոլեջում ընթացող բոլոր գործընթացները միտված են քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացմանը:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱԽՈՍԸ

Չարենցավանի պետական քոլեջը կրթական համակարգի զարգացման ներուժ ունեցող լիարժեք կառույց է, որի հիմնական առաքելությունն է բարենպաստ կրթական միջավայրի ապահովման և ազգային հենքի վրա իրականացվող կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, փոխանցումն ու տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, տարածաշրջանի կրթական, որակի ազգային շրջանակներին (ՈԱՇ), պետական կրթական չափորոշիչներին համապատասխան միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա:

Քոլեջի կարգախոսն է.

«Ուսանողի ներուժի զարգացումը՝ կարող հասարակության ձևավորման գրավական»:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներն են տնօրինական և մանկավարժական խորհուրդները, ուսումնական մասը, տնտեսական մասը, մասնագիտական ամբիոնները, ուսանողական խորհուրդը, կադրերի բաժինը, որակի ներքին ապահովման կենտրոնը, կարիերայի կենտրոնը, հաշվապահությունը, գրադարանը, արխիվը, բուժկետը, ՔՊ շտաբը, ծնողական խորհուրդը:

ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Կառավարման կոլեգիալ մարմին՝ խորհուրդ

Քոլեջի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և Քոլեջի կանոնադրությանը համապատասխան: Քոլեջի կառավարման բարձրագույն մարմինը կոլեգիալ կառավարման խորհուրդն է, որն ունի Քոլեջի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Քոլեջում ապահովվում է կրթական գործընթացի կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությունը ու նրանց ընդգրկվածությունը կառավարման գործընթացին՝ որպես համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման երաշխիք:

Տնօրինական խորհուրդ

Քոլեջի տնօրինական խորհուրդը՝ Քոլեջի տնօրենի նախագահությամբ, գործող մարմին է, որը լուծում է Քոլեջի գործունեության պլանավորման, կազմակերպման, և կառավարման հիմնահարցերը: Քոլեջի Տնօրինական խորհրդի կազմում ընդգրկված են տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը,

կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը, հաշվապահը, ամբիոնի վարիչները, զինղեկ, քաղ.շտաբի պետը, արհմիության նախագահը, կադրերի բաժնի տեսուչը:

Մանկավարժական խորհուրդ

Քոլեջի մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը ղեկավարում է տնօրենը, գործում է Քոլեջի կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է Քոլեջի գործունեությանը վերաբերող ուսումնական և դաստիարակչական հարցեր: Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կաբինետի վարիչները, կուրսղեկները, վարպետները և բոլոր դասախոսները: Ծնողական խորհրդի նախագահը նույնպես մանկավարժական /ուսումնամեթոդական/ խորհրդի անդամ է:

Որակի ներքին ապահովման կենտրոն

Որակի ներքին ապահովման կենտրոնը քոլեջում որակի մշակույթի ձևավորման և որակի ներքին ապահովման գործընթացները կառավարող մարմին է, որի առաքելությունն է նպաստել քոլեջի գործունեության նկատմամբ վստահության ամրապնդմանը և հավաստել ներքին և արտաքին շահակիցներին (ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին, շահագրգիռ հասարակությանը), որ մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից: Որակի ներքին ապահովման կենտրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է քոլեջի կրթության որակի պատասխանատուն:

Կարիերայի կենտրոն

Քոլեջի կարիերայի կենտրոնը առանձին մարմին է, որը կազմակերպում է ուսանողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքները: Կարիերայի կենտրոնի աշխատանքները պլանավորում և իրականացնում է կարիերայի պատասխանատուն ,ով անհատական և խմբային եղանակով ուսանողներին մատուցում է կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման ծառայություններ, աջակցում է իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

ՔՈԼԵՋՈՒՄ ԱՌԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

№	Մասնագիտությունը	Կրթությունը	Կրթության ձևը	Ուսման տևողությունը	Տեղերի քանակը	Տարեկան վարձը՝ վճարովի համակարգում /դրամ/	Որակավորումը
1	Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ	Հիմնական ընդհանուր	առկա	4 տարի	20	90.000	Գործավար
2	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Հիմնական ընդհանուր	առկա	4 տարի	20	90.000	Տեխնիկ ծրագրավորող
3	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում	Հիմնական ընդհանուր	առկա	4 տարի	20	90.000	Մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների
4	Հաշվապահական հաշվառում	Միջնակարգ ընդհանուր	առկա	2 տարի	25	110.000	Հաշվապահ
5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Միջնակարգ ընդհանուր	առկա	2 տարի	20	110.000	Տեխնիկ ծրագրավորող

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

№	Մասնագիտությունը	Կրթությունը	Կրթության ձևը	Ուսման տևողությունը	Տեղերի քանակը	Տարեկան վարձը՝ վճարովի համակարգում /դրամ/	Որակավորումը
1	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում	Հիմնական ընդհանուր	առկա	3 տարի	25	60.000	Փականագործ՝ ավտոմոբիլների նորոգման
2	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	Հիմնական ընդհանուր	առկա	3 տարի	25	60.000	Ներկարար
3	Խոհարարական գործ	Հիմնական ընդհանուր	առկա	3 տարի	25	60.000	Խոհարար

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Քոլեջի յուրաքանչյուր առարկայական և մոդուլային դասընթաց ավարտվում է պարտադիր կիսամյակային գնահատմամբ, որի անցկացման ընթացքում բացահայտվում է ուսանողի կողմից յուրացված գիտելիքի աստիճանը:

Ուսումնական գործընթացի կարևորագույն մաս են կազմում պրակտիկաները, որոնք ուսանողները, ըստ մասնագիտությունների անց են կացնում քոլեջի հետ համագործակցող համապատասխան կազմակերպություններում: Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են Քոլեջի ուսումնական պլաններով: Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների առկա հմտությունների կատարելագործմանը: Քոլեջում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

1. Ուսումնական: Ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը, ուսանողների հմտությունների և կարողությունների ձեռքբերումը:

2. Արտադրական: Արտադրական պրակտիկաների հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործնական աշխատանքների հիման վրա մասնագիտական կարողությունների ձևավորումը:

3. Նախաավարտական: Նախաավարտական պրակտիկան, որպես հիմնական կրթական ծրագրի բաղադրիչ, հանդիսանում է ուսանողի ուսուցման վերջնական փուլ և իրականացվում է տեսական ու պրակտիկ ծրագրերի յուրացումից հետո:

Քոլեջում գործող ուսումնական պլանների համաձայն պրակտիկաները կարող են իրականացվել՝ քոլեջում և քոլեջի հետ համագործակցող կազմակերպություններում: Պրակտիկաներին պետք է վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ, քանի որ դրանց ընթացքում ձեռք բերած գործնական հմտություններն անհրաժեշտ են որակյալ մասնագիտացում ստանալու համար:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսանողների իրավունքները և պարտականությունները սահմանված են ուսանողական պայմանագրում: Ուսանողի և քոլեջի միջև հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, <<Կրթության մասին>>, <<Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, քոլեջի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի ուսանողական խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/ ձևավորում է Քոլեջի ուսանողական համակազմի ներկայացուցիչներից՝ ընտրության կարգով: Խորհրդի ղեկավար մարմինը նախագահն է: Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում

առնվազն երկու անգամ, սակայն կարող են արտահերթ ժողովներ հրավիրվել՝ ըստ անհրաժեշտության: Խորհուրդը ծանոթնում է գործող կանոնակարգին, կազմում է գործունեության տարեկան աշխատանքային պլան և ներկայացնում հաստատման: Լսում և քննարկում է Խորհրդի նախագահի հաշվետվությունները, քննարկում է Խորհրդին առնչվող այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ: Ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է փակ գաղտնի քվեարկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում): Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի անդամների երկու երրորդը: Ընտրվում են նաև խորհրդի փոխնախագահ և քարտուղար: